#ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄ

ՏԵՂԵԿԱԳԻՐ 3, ԱՊՐԻԼ 2021

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆ ԵՊՀ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

ԵՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻՑ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՎԻԴԵՈԲԼՈԳ

ԵՊՀ Փաստերի ստուգման լաբորատորիա

Երևանի պետական համալսարանի Ժուռնալիստիկայի ֆակուլտետն առաջինն արձագանքեց ծրագրի նախաձեռնությանը և Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հետ կնքեց Հուշագիր՝ ֆակուլտետում Փաստերի ստուգման լաբորատորիա հիմնելու վերաբերյալ: Ֆակուլտետի ուսանողները Փաստերի ստուգման լաբորատորիայում ծանոթանում են կարևորագույն այն գործիքներին, որոնք ապագայում կիրառելու են որպես ոլորտի մասնագետներ: Ուսանողները կատարում են ուսումնասիրություններ, գրում նյութեր, որոնք նաև հրապարակվում են տարբեր առցանց պարբերականներում: >>>

Տեղեկագիրը պատրաստվել և հրապարակվել է Ինֆորմացիայի ազատության կենտրոնի և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտի համատեղ իրականացվող «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակներում, որն իրականացվում է ԱՄՆ պետքարտուղարության Հասարակայնության հետ կապերի գրասենյակի դրամաշնորհի շրջանակներում: Այստեղ արտահայտված է հեղինակներիի դիրքորոշումը, որի համընկնումը ԱՄՆ պետքարտուղարության դիրքորոշման հետ պարտադիր չէ:

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԵՊՀ ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

Երևանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողները միացել են Փաստերի ստուգման Լաբի աշխատանքներին: Ապագա լրագրողները ծանոթանում են ապատեղեկատվությունը հայտնաբերելու և տեղեկությունները ճշտելու ժամանակակից գործիքներին, փորձարկում դրանք համատեղ վարժանքների ընթացքում:

Դասերի ընթացքում ուսանողներն օգտվում են տարբեր գործիքներից, ուսումնասիրում լուսանկարներ, տեսանյութեր, քարտեզներ, փորձում գտնել դրանց սկզբնաղբյուրները: Ինչպես նաև՝ դասընթացավարի օգնությամբ ուսանողները տեղեկություն ստանալու հարցումներ են ուղարկում պատկան մարմիններին, ստանում պատասխաններ, վերլուծում դրանք: Խորացված որոնման և ըստ տեղանքի սոցցանցերի գրառումների որոնման համար այս ընթացքում ուսումնասիրել են նոր գործիքների կիրառություն, փորձել առավել մանրամասն ուսումնասիրել սոցիալական ցանցերը՝ ներքին որոնողական հնարավորությունների միջոցով, ինչպես նաև զննել օգտատիրոջ գործողությունները սոցցանցում: Փորձում են փնտրել ջնջված տեղեկատվությունը, գտնել լուսանկարների և տեսանյութերի սկզբնաղբյուրները, պարզել դրանց իսկությունը, տեղանքը:

Այս ամիս ԵՊՀ «Փաստերի ստուգման» լաբորատորիայի անդամները հանդիպում են ունեցել փորձագետ Արթուր Պապյանի հետ, ով իր փորձով և խորհուրդներով կիսվեց ուսանողների հետ:

Դասավանդող՝
Սահականուշ Պետրոսյան

Հիմնական խումբ.

- Ասատրյան Նարե, 1-ին կուրս
- Առաքելյան Լուսինե, 1-ին կուրս
- Մարտիրոսյան Նարեկ, 2-րդ կուրս
- Դավթյան Արծվիկ, 2-րդ կուրս
- Ղումաշյան Անի, 2-րդ կուրս
- Արսենյան Օֆելյա, 2-րդ կուրս
- Խաչատրյան Զարա, 2-րդ կուրս
- Հարությունյան Մարիամ, 2-րդ կուրս
- Գրիգորյան Էլիզա, 3-րդ կուրս
- Հակոբյան Սրբուհի, 4-րդ կուրս
- Հակոբյան Լիանա, 4-րդ կուրս

ՓԱՍՏԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ

հաշիվների ստուգում սոցցանցերում

- https://www.whois.com/
- https://www.amnic.net/whois/,
- https://xaviesteve.com/domeye/,
- https://www.emailsherlock.com/,
- https://twitter.com/search-advanced/,
- https://namechk.com/:

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆԱՊԱՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՕՐԵՐԻՆ



Ադրբեջանական լրատվամիջոցների տարածած իբրև պաշտոնական տեղեկատվությունից հետո, հայկական կողմը պարբերաբար հերքող տեղեկատվություն էր հրապարակում: Դրանից է նաև ադրբեջանական կայքերում տարածվող, Գյանջայում տեղի ունեցած պայթյունի մասին լուրը, որի տարածումից անմիջապես հետո «Զինուժ» մեդիան հերքող տեսանյութ հրապարակեց:

Հրապարակված տեսանյութից մի քանի ժամ անց ադրբեջանական քարոզչամեքենան լայնորեն տարածում էր մի տեսանյութ, որտեղ ենթադրաբար հայկական ուժերը Գրադ կայանքից հրթիռարձակում են իրականացնում, և դա սկսել են ներկայացնել որպես հայերի կողմից Գյանջան հրթիռակոծելու ապացույց:

Ընդամենը րոպեներ անց Բաքուն տարածել էր իբր Գյանջայի պայթյունից զոհված երեխայի սարսափազդու մի լուսանկար: Ամենամակերեսային ուսումնասիրությունն անգամ ցույց է տվել, որ այս տեղեկությունը նույնպես կեղծիք է: Այդ լուսանկարն արված է 4 տարի առաջ՝ Սիրիայում: Ամենացնցողը պնդումն է, թե Գյանջան հրթիռակոծվել է Հայաստանի տարածքից: Պաշտոնական Բաքուն հայտարարությունն անում էր՝ չունենալով որևէ ապացույց:

Տարածվող լուսանկարներից շատերը նաև պատկերում էին տարիներ առաջ կատարված իրադարձությունները՝ դրանց թվում էր նաև այն լուսանկարը, որտեղ երեխան տուժել է, իսկ նրան փորձում են օգնել: Այնինչ լուսանկարը իրականում արվել էր Սիրիայում՝ 2015 թվականին:

Լիանա Հակոբյան,
ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետ, 4-րդ կուրս

ԿԵՂԾ ԼՈՒՐԵՐԸ՝ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔ՝ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՃԱՐԱԿԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Ընդհանրապես, տեղեկատվության պակասի պատճառով մարդիկ հակված են հավատալ ցանկացած նորության: Այդ պատճառով հատկապես շատ կեղծիքներ հայտնվում են համաճարակների, ռազմական բախումների ժամանակ՝ ահաբեկչություններից կամ այլ արտակարգ իրավիճակներից անմիջապես հետո: Սա ապացուցեցին կորոնավիրուսային համավարակը և արցախյան երկրորդ պատերազմը, որոնք նպաստեցին կեղծ թեզերի շրջանառմանը սոցցանցերում և լրատվամիջոցներում:

«COVID-19-ը կենսաբանական զենքի փորձարկում է»: «Օղին օգնում է կորոնավիրուսի դեմ»: «Ամառը կգա, եւ վիրուսը կմեռնի»: Համաճարակի առաջին իսկ օրվանից համացանցը, մասնավորապես Ֆեյսբուքը, ողողված էր նմանատիպ տեսություններով: Եվ նույնիսկ հարգված լրատվամիջոցները հաճախ խեղաթյուրում էին տեղեկատվությունը կամ դրանք հանում համատեքստից: Օրինակ՝ հունվարի 22-23-ն ընկած ժամանակահատվածում Ֆեյսբուքում աննախադեպ տարածում գտավ տեսակետը, թե «2019-nCoV» վիրուսը օձերի և չղջիկների վիրուսների հիբրիդ է: Այս տեղեկությունը հայտնվեց նաև հայկական մամուլում: Լրատվականները, սակայն, չէին հայտնում ինֆորմացիայի աղբյուրը: Տեղեկատվության ստուգման կենտրոնին հուզում էր այն խնդիրը, որ օգտագործվում էր միայն հին ու բարի «գիտնականների ուսումնասիրությամբ», «գիտնականների պնդմամբ» եզրույթը:

Վիրուսի՝ օձի և չղջիկի հիբրիդ լինելու վարկածից հետո՝ սոցիալական ցանցերը լի էին քննադատություններով՝ ուղղված չինացիների սննդակերպին: Այդ օրերին համացանցում սկսեց շրջանառվել մի քանի տարվա վաղեմության տեսանյութ, որտեղ մի չինուհի համտեսում է եփված չղջիկ՝ նշելով, որ այն հավի մսի համ ունի: Մարդիկ գրում էին, որ չնայած վիրուսային համաճարակին՝ Ուհանում շարունակում են չպահպանել սննդակարգը: Այդ տեսանյութը, սակայն, արվել էր ոչ թե Ուհանում կամ Չնաստանում, այլ խաղաղօվկիանյան Պալաու կղզի-պետությունում՝ 2016 թվականին:

Սրբուհի Հակոբյան,
ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետ,
4-րդ կուրս

ՏԱ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

20 Տարի
2001 - 2021
ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
Միասին Տեղեկատվության Ազատության Համար

foi@foi.am

+374 91 407836
+374 91 700 974

#ԱՆՎՃԱՐ_ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ

տեղեկատվության ազատության ոլորտում

ԴԻՄԵՔ ՄԵԶ, եթե

- չգիտեք՝ ինչպես դիմել տեղեկություն ստանալու համար
- ստացել եք թերի կամ ոչ լիարժեք պատասխան
- խախտվել են տեղեկություն ստանալու ժամկետները
- պետական մարմինները մերժել են տրամադրել պահանջվող տեղեկությունը

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն,
Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

#ՎԻԴԵՈԲԼՈԳ

#ՖԵՅՔԱՔԱՂ 3
Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի հետ

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը և Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ ՀԿ-ն «Պայքար ապատեղեկատվության վիրուսի դեմ» ծրագրի շրջանակում մեկնարկել են Ֆեյքաքաղ վիդեոբլոգների շարքը՝ մեդիափորձագետներ Սամվել Մարտիրոսյանի և Արթուր Պապյանի մասնակցությամբ: Նախաձեռնության նպատակն է զարգացնել լրատվամիջոցների մեդիագրագիտությունը և երիտասարդության փաստերի ստուգման հմտությունները:

Ֆեյքաքաղ #3. որոնում ենք սոցցանցերում

Հաճելի դիտում:
Կհանդիպենք հաջորդ ամիս

Ինֆորմացիայի ազատության կենտրոն
Հայաստանի Հանրապետություն, Երեւան, 0010, Փ. Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ.՝ (+374 10) 560 360
Էլ. փոստ՝ foi@foi.am
www.foi.am

Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0002, Ղազար Փարպեցու 9բ, 27 ա
Հեռ.՝ +374 95 938363
Էլ. փոստ՝ info@mdi.am
www.mdi.am